ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՍՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Արայիկ Խզմալյան

- **ԶԲԱՂԵՑՐԱՑ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Տրիկազե (Իտալիայի Հանրապետություն)
2019 թվականի սեպտեմբերի 4-7

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

«Սալենտո» 16-րդ միջազգային կինոփառատոն

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն «Սալենտո» 16-րդ միջազգային կինոփառատոնին

Հայ-իտալական մշակութային համագործակցության շրջանակում Տրիկազեի քաղաքապետ Կարլո Չիուրիի և Սալենտոյի միջազգային կինոփառատոնի տնօրեն Լուիջի Կոմպանիլլեի հրավերով 2019թ. սեպտեմբերի 4-7-ը մեկնեցի Իտալիա՝ մասնակցելու Սալենտոյի միջազգային 16-րդ կինոփառատոնին:

Փառատոնի բացման արարողությանը հանդես եկա ելույթի խոսքով՝ կարևորելով հայ-իտալական մշակույթի առնչությունների ամրապնդումը, մարդասիրական արժեքները կինոյի միջոցով հաստատելու հնարավորությունները,

ինչպես նաև շնորհակալություն հայտնեցի փառատոնի մեկնարկը Միքայել Պողոսյանի «Արև, սարեր ու սեր» ֆիլմով իրականացնելու համար:

Ներկայացրել եմ նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ իրականացվող «Ֆրեսկո» հոգևոր ֆիլմերի փառատոնը և վերջինիս հետ համագործակցելու հեռանկարները: Քննարկում է կազմակերպվել հայկական ֆիլմերը իտալական կինոշուկայում տարածելու առնչությամբ:

Հայկական պատվիրակությանն ընդունել է նաև քաղաքապետը: Հանդիպման ընթացքում քննարկվել են մշակույթը և զբոսաշրջությունը համադրելու հնարավորությունները:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Համագործակցության հաստատում «Սալենտո» փառատոնի և հայկական «Ֆրեսկո» միջազգային փառատոնի միջև
2. Փառատոնի շրջանակներում ցուցադրված հայկական ֆիլմերի տարածում իտալական կինոշուկայում
3. Իտալիայում հայկական մշակութային օրերի անցկացման նախնական պայմանավորվածություն:

11.09.2019

X _____

Արայիկ Խզմալյան